**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր բնակավայրի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/117 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/117-1 ծածկագրով պայմանագրում 2025 թվականի մայիսի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.** Կատարողի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ Մեծամորի համայնքապետարանի և «ՆԱՐ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում միջև 2024 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/117-1 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** Մեծամորի համայնքապետարանի և «ՆԱՐ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում միջև 2024 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/117-1 պայմանագրի.

1.1 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետըմայիսի 19» սյունակում 2-րդ, 3-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով նշված աշխատանքի կատարման ժամկետը խմբագրվել և ներկայացվել է նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 60 օրացուցային օրվա ընթացքում»:

1.2 Պայմանագրի Հավելված թիվ 2-ի և 21.04.2025թ.-ին կնքված Համաձայնագիր 5-ի Հավելված N 1-ի «ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը»-ի «Ավարտը» սյունակում նշված «Աշխատանքաների սկզբից 30 օրացուցային օրվա ընթացքում» բառերը 2-րդ, 3-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով փոխարինվել է «Աշխատանքաների սկզբից 60 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**